ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ գրականագետ, հրապարակախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցույթի դափնեկիր Գառնիկ Անանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կնունյանց 24/1 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ գրականագետ, հրապարակախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Անանյանը ծնվել 1934թ. հուլիսի 22-ին, Իջևան քաղաքում: 1952թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1953թ. ընդունվել և 1958թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Մեկ տարուց ավել աշխատել է «Իջևանի կոլտնտեսական» թերթի խմբագրությունում՝ իբրև գրական աշխատող, իսկ 1959-61թթ. եղել է ՀԼԿԵՄ Իջևանի շրջկոմի առաջին քարտուղարը:

1961-64թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում:

1965թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայ գրականությունը և գրական քննադատությունը «Մուրճ» ամսագրում 1889-1900թթ.» թեմայով:

1982թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Եղիշե Չարենց. կյանքի և ստեղծագործության հիմնահարցեր» թեմայով:

1965թ.-ից դասախոսել է ԵՊՀ-ի բանասիրական, ապա՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետներում:

1977-1985թթ. եղել է համալսարանի հրատարակչության տնօրենը: Նրա ղեկավարած տարիներին հիմնադրվել են «Ուսանողի գրադարան» և «Հայագիտական» մատենաշարերը, ինչպես նաև հրատարակվել են «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», «Հայոց պատմություն» և մի շարք այլ կոթողային աշխատություններ:

1985-1996թթ. եղել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկանը, 1987-2000թթ.՝ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչը:

1999թ. հոկտեմբերի 1-ից ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադիր դեկանն էր:

1974թ.-ից Հայաստանի գրողների միության անդամ էր, 1986թ.-ից՝ Հայաստանի ժուռնալիստների միության անդամ:

2006թ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Հեղինակ է 30 գրքի, կազմել ու հրատարակության է պատրաստել շուրջ 20 գիրք, հեղինակ է մոտ 100 գիտական և ավելի քան 200 գրական-հրապարակախոսական հոդվածի:

Արժանացել է Հայաստանի ժուռնալիստների միության «Ոսկե գրիչ» մրցանակին:

Գ. Անանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Կնունյանց փողոց 24/1 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի ժուռնալիստների և Հայաստանի գրողների միությունների նախագահների կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գառնիկ Անանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գառնիկ Անանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ